



<< քայլ առ քայլ >> բարեգործական հիմնադրամ

<< Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման >> ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Ինտեգրված պարապմունքների կազմակերպումը՝ կարողունակահեն կրթական մոտեցման համատեքստում

Դաստիարակ՝ Նունե Սմբատյան

Մանկապարտեզ՝ Եղեգնաձոր համայնքի թիվ 2 մսուր մանկապարտեզ ՀՈԱԿ

2023թ.

Բովանդակություն

Ներածություն _____ 3 էջ

Գլուխ 1 Մաթեմատիկական տարրական պատկերացումների և ապլիկացիայի
զարգացումը 3-4 տարեկան կրտսեր երկրորդ խումբ _____ 5 էջ

Գլուխ 2 1. Ի ենթաթեմա Պարապմունքի պլան _____ 7 էջ

2. Եզրակացություն _____ 11 էջ

3. Գրականության ցանկ _____ 14 էջ

Ներածություն

Վաղ մանկության կրթության ոլորտում երկրաչափական մարմինների ուսումնասիրությունը խոստումնալից ուղղություն է նախադպրոցական տարիքի երեխաների հիմնարար մաթեմատիկական ըմբռնման զարգացման համար: Քանի որ վաղ մանկության կրթության գիտնականներն ու տեսաբանները կարևորում են մաթեմատիկական հասկացությունները վաղ մանկության ուսումնական ծրագրում ինտեգրելու կարևորությունը, երկրաչափական մարմինների ուսումնասիրությունը դառնում է հետազոտության գրավիչ ոլորտ: Համապատասխան գրականության ակնարկը բացահայտում է գաղափարների հարուստ պալիտրա, որոնք արտահայտել են այնպիսի տեսաբաններ, ինչպիսիք են Կլեմենտսը, Սարաման և վան դե Վալեն, ովքեր զգալի ներդրում են ունեցել վաղ մաթեմատիկական կրթության հարցերի քննարկման գործում:

Կրթական համակարգում կատարվող բարեփոխումները պահանջում են նոր մեթոդոլոգիական մոտեցում, բովանդակային նշանակության, խնդիրների լուծման ժամանակ, որը նպաստում է կրթության որակի բարձրացմանը: Այդ պատճառով ստեղծվել են ինտեգրված պարապմունքներ, որը համարվում է ուսուցման մեթոդների նորույթ:

Ինտեգրված պարապմունքները միավորում են տարբեր առարկաների ուժերը և ստեղծում միջառարկայական կապերով հարուստ պարապմունքներ:

Ինտեգրված պարապմունքների նպատակն է բարձացնել կրթական մակարդակի որակը: Փորձը ցույց է տալիս, որ ինտերակտիվ մեթոդների կիրառումը նախադպրոցական տարիքի երեխաների համար պարապմունքները դարձնում է հաճելի, զվարճալի և արդյունավետ՝ հատկապես, եթե դրանք անցկացվում են կերպարվեստային միջոցների զուգակցմամբ: Նման գործունեության ընթացքում ակտիվորեն զարգանում է երեխայի հոգեկան գործընթացները:

Ինտեգրված պարապմունքի ընթացքում կարելի է ինտեգրել մանկավարժական գործընթացի բաղադրիչ՝ նպատակ, բովանդակություն, ուսուցման մեթոդ և միջոց: Ցանկացած ինտեգրված պարապմունք նպատակ ունի դուրս գալու մեկ առարկայի նեղ շրջանակներից:

Ինտեգրված պարապմունքները հնարավորություն են տալիս կիրառելու ուսուցման ինտերակտիվ մեթոդներ: Աշխատելով փոքր խմբերով, համագործակցելով հասակակիցների հետ, յուրաքանչյուր երեխա գտնվում է բավականին շահեկան և բարենպաստ պայմաններում:

Նպատակից բխում են հետևյալ խնդիրները՝

1. Երեխաների մոտ տրամաբանական և մաթեմատիկական հասկացությունների զարգացում
2. Գաղափար առարկաների մաթեմատիկական երկրաչափական պատկերների մասին
3. Համագործակցելով հասակակիցների հետ, երեխան ավելի արագ է ինտեգրվում
4. Նույն ժամանակահատվածում խմբի բոլոր երեխանները զբաղված են
5. Համագործակցության ընթացքում բարձրանում է երեխայի ինքնագնահատականը
6. Երեխան հնարավորություն է ունենում ազատ ինքնաարտահայտվելու
7. Ակտիվ աշխատում ու զարգանում են թե օժտված երեխանները, թե՛ կարողության, թե՛ առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխանները
8. Օգնելով ընկերներին օժտված երեխան նորից սովորում է, ամրապնդում իր իմացածը
9. Երեխանները հնարավորություն են ունենում սովորել սեփական սխալների վրա
10. Ուսուցումը վեր է ածվում հաճելի համագործակցության

Ինտեգրված պարապմունքը հատուկ տեսակ է, որը իր մեջ միավորում է մեկ հասկացություն ուսուցում միաժամանակ միքանի առարկաներով: Այս տեսակ պարապմունքների ժամանակ առաջատար դերում հանդես է գալիս հիմնականում մեկ առարկան, ինտեգրելով մյուսը:

ԳԼՈՒԽ I

ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՏԱՐՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱԳՈՒՄՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ 3-4 տարեկան կրտսեր 2-րդ խումբ

Այս տարիքային խմբում «Մաթեմատիկական տարրական պատկերացումներ» ծրագրային բաղադրիչի նպատակներն են. նպաստել իմացական գործընթացների, ճանաչողական հետաքրքրություններ զարգացմանը, զարգացնել հաղորդակցական հմտությունները, հաղորդել երկրաչափական պատկերների մասին նախագիտելիքներ: Ծրագրային բաղադրիչն իր մեջ ընդգրկում է պատկերների մեծության, ձևի, քանկի, առարկաների միջև գոյություն ունեցող հիմնական տարածական, ժամանակային և քանակական հասկացությունների մասին տեղեկություններ: Ծրագրային բաղադրիչն իր մեջ ներառում է հետևյալ բաժինները, նախաթվային, թվային հնդիրներն են՝ ձևավորել մաթեմատիկական տարրական նախաթվային պատկերացումներ՝ մեծություն, ձև և տարածության ու ժամանակի մեջ կողմնորոշում. կարողանալ տարբերել և խմբավորել առարկաների խմբերն ըստ ընդհանուր հատկանիշների՝ գույնի, ձևի, չափի, սովորեցնել կազմել միատեսակ առարկաների խմբեր, խմբից առանձնցնել մեկ առարկա ձևավորել առարկաների 2 խմբերը համեմատելու հմտություն ձևավորել տարածության և ժամանակի մեջ կողմնորոշվելու

Առարկաների միջև հարաբերությունները ցույց տալու համար օգտագործել հետևյալ հասկացությունները. մեծ, փոքր, չափով հավասար երկար, կարճ, երկարությամբ հավասար, լայն, նեղ, լայնությամբ հավասար հաստ, բարակ, հաստությամբ հավասար: Երկարություն- Ծանոթացնել տարբեր եղանակներով համեմատել 2 առարկաների երկարությունը:

Բարձրություն- Ծանոթացնել տարբեր եղանակներով համեմատել 2 առարկաների բարձրությունը:

Լայնություն- Ծանոթացնել տարբեր եղանակներով համեմատել 2 առարկաների լայնությունը:

Հաստություն- Ծանոթացնել տարբեր եղանակներով համեմատել 2 առարկաների հաստությունը:

Ձև- ձևավորել տարրական պատկերացումներ երկրաչափական մարմինների և պատկերների մասին՝ խորանարդ, գունդ, բուրգ, քառակուսի, եռանկյուն և շրջան:

Տարածության մեջ կողմնորոշում-Սաներին ծանոթացնել տարածական հիմնական հասկացություններին՝ կողմնորոշվելով սեփական մարմնի դիրքով՝ աջ, ձախ, վերև, ներքև, առաջ, հետ, հեռու, մոտ, վրա, տակ:

Ժամանակի մեջ կողմնորոշում- Երեխաներին ծանոթացնել օրվա մասերին:

I Ենթաթեմա Պարապմունքի պլան

Նախադպրոցականի տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացումը ուսումնասիրելու համար կրտսեր երկրորդ խմբում անցկացվեց հերթական պարապմունքը, որը իր բնույթով ինտեգրված էր՝ մաթեմատիկա, ապլիկացիա: Թեման երկրաչափական պատկերներն էին, տեսակը՝ թեմայի ամփոփում (շրջան, եռանկյունի, քառակուսի), պարապմունքի տևողությունը 15-20 րոպե: Պարապմունքն անց էր կացվում շատ անկաշկանդ մթնոլորտում, ներկա էին նաև տնօրենը, միջին և ավագ խմբի դաստիարակները, և մեթոդիստը:

Պարապմունքի նպատակ- ճանաչել և անվանել պարզ երկրաչափական պատկերը (շրջան, եռանկյունի, քառակուսի): ճանաչել և խմբավորել երկրաչափական պատկերները: Ամպրապնդել ծանոթ երկրաչափական պատկերների մասին գիտելիքները: Ստանալ նոր երկրաչափական պատկերներ տարբեր երկրաչափական պատկերներից: Երեխաներին տրվել էր բոլոր անհրաժեշտ նյութերը:

Դիդակտիկ նյութեր- Տարբեր գույնի, չափսի կտրատած երկրաչափական պատկերներ (շրջան, եռանկյունի, քառակուսի): Տուցադրական մեծ չափսի գունեղ նկարված երկրաչափական պատկերներ, A4 ֆորմատի թղթեր երեխաների քանակին համապատասխան, սոսինձ և այլն:

Խթանման փուլ- Չյուր են գալիս երեք երեխա երկրաչափական պատկերներով: Չրուցում են իրար հետ, պատմում են շրջանի և քառակուսու համերաշխ ընկերության մասին:

-Մի օր նրանք զբոսնում էին այգում: Չանկար մի անծանոթ պատկեր թռավ իրենց վրա՝ բղավելով. << Կծակծկե՛մ, տեսե՛ք, թե ինչպիսի սուր ոտքեր ունեմ>>: Իսկ շրջանը պատասխանում է. <<Սպասի՛ր, սպասի՛ր, դու բռնիր հետո ծակի՛ր >> և սկսում է գլորվել: Չարածնի եռանկյունին, ճկարողանալով գլորվել, ասում.

- Քանի որ չկռվեցինք եկեք ծանոթանանք:

Իմաստի ընկալման փուլում կատարեցինք խմբակային աշխատանք, երեխաները նստած են սեղանների շուրջ, սեղանների վրա դրված էր երկրաչափական պատկերներ, սաները իրենք են ընտրում պատկերները և անվանում շրջան, եռանկյունի և քառակուսի: Չետո երեխաներին հարցնում ենք .

1. Ի՞նչ է սա:

Պատասխանում ենք,- Սա շրջան է, կողմեր չունի, կլոր է և գլորվում է: Առաջարկվեց մատով գծել և գլորել սեղանի վրա:

2. Իսկ սա, ո՞ր պատկերն է:

Պատասխանում ենք,- Սա քառակուսին է, Ինչո՞ւ է քառակուսի, ցույց տալ քառակուսին, մատով շրջագծել և ասել, այն ունի չորս կողմ, չորսն էլ իրար հավասար և չի գլորվում:

3. Իսկ սա ի՞նչ պատկեր է:

Պատասխանում ենք,- Սա եռանկյունին է, ունի երեք կողմ և երեք անկյուն:

Ֆիզկուլտ դադար- Սաների առջև դրված էր թխվածքաբլիթներ, երկրաչափական պատկերների տեսքով (շրջան,քառակուսի, եռանկյունի): Երեխաները հերթով մոտենում են, ընտրում պատկերը, անվանում և համոտեսում: Երեխաների համար այս խաղը անակնկալ էր և բոլորն էլ շատ ակտիվ էին: Ֆիզկուլտդադարի ժամանակ բոլոր երեխաները ակտիվ էին և արագ կողմնորոշվում էին:

Կշռադատման փուլի ժամանակ երեխաներին տրվեցին հարցեր, ինչպիսի՞ն է շրջանը, ովքե՞ր էին այսօր մեր հյուրերը, ինչպիսի՞ն էր ջջանը, քառակուսին քանի՞ կողմ ունի, քանի՞ կողմ և քանի՞ անկյուն ունի եռանկյունին: Երեխաները տվեցին հարցերին ճշգրիտ պատասխաններ՝ այն է նշեցին երկրաչափական պատկերները, նրանց առանձնահատկությունները (գագաթ ունեցող և գագաթ չունեցող):

Չարցերի պատասխանից հետո, ամփոփեցինք թեման և պարապմունքը ավարտվեց:

-Յնչում է երգ երկրաչափական պատկերների մասին:

Վերջնարդյունքներ- Պարապմունքն անցավ հետաքրքիր,որի ժամանակ երեխաներն իրենց զգում էին շատ ազատ, քանի որ աշխատում էին անկաշկանդ մթնոլորտում, երբեմն իրենք դառնում էին ստեղծագործ: Պարապմունքի ընթացքում զարգացավ նրանց ճիշտ կողմնորոշվելու և արագ արձագանքելու կարողությունները: Պարապմունքի ժամանակ ստացած գիտելիքների հիման վրա ամրապնդվեց երեխաների երկրաչափական պատկերները տարբերելու և դասակարգելու, շրջապատում տարբեր երկրաչափական պատկերները ըստ իրենց բնորոշ առանձնահատկությունների հայտնաբերելու և համեմատելու կարողությունները, կճանաչի և կանվանի պարզ երկրաչափական պատկերները (շրջան, եռանկյունի, քառակուսի):

Ապիկացիայի պարապմունքով ամրապնդել երեխաների պատկերացումները տարբեր երկրաչափական պատկերների մասին, կլոր առարկաների, քառակուսի, եռանկյուն պատկերների մասին, սովորեցնել պատկերը ճիշտ տեղադրել թղթի վրա, զգույշ օգտվել սոսինձից: Դաստիարակել մաքուր և կոկիկ աշխատելու ունակությունը, ցույց տալ երեխաներին սպիտակ թղթի կենտրոնը, վերևի և ներքևի անկյունը և բացատրել ինչպես պետք է սոսնձեն նախապես կտրատված գունավոր երկրաչափական պատկերները: Աշխատանքը ավարտելուց հետո սաներին հարցնել.

-Երեխաներ, այսօր, 1.ո՞ր երկրաչափական պատկերները մենք ապիկացիա արեցինք:

2. Ո՞ր գույնի պատկերը ձեզ դուր եկավ (Ասել գույնը և պատկերը):

Այսպիսով ևս մեկ անգամ խմբով կրկնում ենք երկրաչափական պատկերները և ավարտում պարապմունքը:

Վերջնարդյունքներ- Սաները ճիշտ կստանձեն կտրատած դետալները (շրջան, եռանկյունի, քառակուսի):

Ցուցադրական պատին ամրացվում են բոլոր երեխաների աշխատանքները: Բոլորը դիտում են իրենց կատարած աշխատանքները, հարցնում ենք կարծիք իրենց կատարած աշխատանքների վերաբերյալ և խրախուսում բոլոր երեխաներին:

Մեթոդիստի կարծիք- Պարապմունքը պլանավորված էր, ձևակերպված էր պարապմունքի թեման, նպատակը, քայլերը, վերջնարդյունքները: Քայլերը փոխկապակցված էին: Դաստիարակը խթանում էր երեխաների հետաքրքրությունը, փորձում էր ներգրավել յուրաքանչյուր երեխայի: Հետադարձ կապը որ բոլոր սաների հետ էր ստացվում ապահովել: Դաստիարակը խոսում էր պարզ, գրագետ, ունի խոսքի չափավոր տեմպ: Առկա էին դիդակտիկ պատկերներ, երեխաների թվին համապատասխան բաշխիչ նյութեր: Պարապմունքի ընթացքում կիրառվեցին տարբեր խաղեր, երեխաները ստանձնել էին դերեր (երկրաչափական պատկերների տեսքով), ուրախ ու <<համեղ>> մտնուրտը ապահովված էր:

Դաստիարակը հասավ պարապմունքի նպատակներին՝ ճանաչեցին, անվանեցին շրջանը, եռանկյունին և քառակուսին:

Աշխատանքները կոգնեն լեզվական և հաղորդակցական, մաթեմատիկական կարողունակությունների հետագա զարգացմանը: Երեխաները ազատ էին, անկաշկանդ, միայն երկու երեխա լուռ էին, պասիվ, նրանց չհաջողվեց ընգրկել հարց ու պատասխանին, վերջում միացան թիմին՝ ապիկացիա կատարելուց:



Եզրակացություն

Նախադպրոցական կրթության մեթոդական նորացման կարևոր ուղղություններից է ինտեգրված և համալիր պարապմունքների անցկացումը մանկապարտեզի մանկավարժական գործընթացում: Թեմատիկ պարապմունքների ընթացքում կարևորվում է գործունեության այն ձևերը, որոնք պահանջում են ինքնուրույն մտածողություն, նախաձեռնողականություն, համագործակցություն, հնարամտություն, կարգապահություն և այլն: Մույն թեմայի նպատակն է ներկայացնել ուսուցման գործընթացի կազմակերպման ձևերից մեկը, որն իրականացվում է ինտեգրված և համալիր ուսուցման օգնությամբ: Շատ կարևոր է ճիշտ որոշել, թե որ թեմաներից կարելի է կազմակերպել ինտեգրված պարապմունք, որտեղ կարող ենք պահպանել միջառարկայական կապեր, և որն է մեր պարապմունքի գլխավոր նպատակը: Երբ որոշված է ընդհանուր նպատակը, արդեն առարկաների բովանդակությունից ընտրում են միայն այն տեղեկությունները, որոնք անհրաժեշտ են նպատակին հասնելու համար: Սակայն դեռևս ստեղծված չեն բավականաչափ ինտեգրացված պարապմունքների համար գրքեր, ընդգծված և համակարգված չեն ուսումնական նյութերը, որը դաստիարակի համար դժվարին խնդիր է: Ինտեգրված պարապմունքը դառնում է գրավիչ դերախաղ, քննարկում, ոչ թե գուտ գիտելիքների ծավալի հաղորդում: Ինտեգրված և համալիր ուսուցման նպատակն այն է, որ ուսումնական գործընթացում երեխան ոչ թե պետք է նստի, լռի, լսի, երբեմն էլ խոսի, այլ առավելապես պետք է գործի, մասնակցի, աշխատի և պատասխանատվություն ստանձնի: Մենք խնդիր ունենք ուսուցումը դարձնելու աշխատանքային գործընթաց, հակառակ դեպքում փոքր տարիքից երեխաների մեջ սերմանում ենք ծուլություն և անպատասխանատվություն: Մյուս սկզբունքն այն է, որ նոր ուսումնական միջավայրը պետք է լինի բազմանպատակ, շարժուն, բաց: Երեխաները պետք է հնարավորություն ունենան անհատական, զույգերով, փոքր ու մեծ խմբերով աշխատելու, ինչը հնարավորություն կտա ուսումնական գործընթացը դարձնել բազմազան և ոչ ձանձրալի: Նոր ուսումնական միջավայրում աշակերտները պետք է հնարավորություն ունենան աշխատել ոչ միայն դաստիարակի, այլև միմյանց հետ: Բացի այդ, երբեմն երեխաները միմյանցից ավելի լավ են սովորում, քան դաստիարակներից: Վերջին տարիներին խրաբուսվում են նմանօրինակ պարապմունքի վարման եղանակները, բայց ոչ բոլոր առարկաներից ու ոչ բոլոր պարապմունքին կարելի է կիրառել նոր, ինտերակտիվ մեթոդներ ու պարապմունքն անցկացնել համագործակցային մեթոդով: Ուստի պետք է հստակ պատկերացնել տվյալ պարապմունքին համապատասխանող մեթոդները, դրանից բխող արժեքային համակարգն ու աշակերտների

կարողությունները, քանի որ յուրաքանչյուր պարապմունքի համար անհրաժեշտ է կիրառել սոցիալական հմտությունների ու արժեքային համակարգի ընտրության յուրովի մոտեցում: Այս և նմանօրինակ խնդիրներից գերծ մնալու համար անհրաժեշտ է, որ յուրաքանչյուր դաստիարակ հստակ տիրապետի առարկայական չափորոշչային պահանջներով ներկայացվող պահանջներին, իմանա սոցիալական հմտությունների և արժեքային համակարգի կշիռն ու դերը յուրաքանչյուր պարապմունքի պրոցեսին անհատապես: Որպեսզի ինտեգրվեն, այսինքն՝ ճիշտ ձևով միավորվեն ուսումնական գործընթացի բաղադրիչները, պետք է կատարվեն այնպիսի գործողություններ, որոնք ի սկզբանե ունեն ստեղծագործական բնույթ:

Այս նախապատրաստական գործունեության ընթացքում դաստիարակը որոշում է.

1. ինտեգրված պարապմունքի անցկացման իր դրդապատճառներն ու նպատակները
2. համակարգ ձևավորող բաղադրիչների մեջ առաջատարի և երկրորդականի առանձնացումը
3. ինտեգրման ձևերն ու մեթոդները
4. միավորվող նյութերի միջև կապերի բնույթը
5. նյութի հաջորդականության կառուցվածքը
6. նյութի ներկայացման միջոցները
7. դերերի բաշխումը ինտեգրվող առարկաների միջև
8. տվյալ պարապմունքին սովորողների ուսուցման վերահսկման ձևերն ու տեսակները
9. տարբեր առարկաների միջև կապ տեսնելու և այդ կապը գործնականում օգտագործելու կարողությունների ու հմտությունների զարգացում
10. սովորողների համար պայմանների ստեղծում՝ կիրառելու իրենց գործնական հմտությունները, ստեղծագործելու կարողությունները, ինքնադրսևորվելու՝ միաժամանակ ձեռք բերելով կայուն գիտելիքներ
11. աշակերտների բանավոր խոսքի, ստեղծագործական մտքի, լսողական հմտությունների զարգացում
12. պարապմունքի պլանի կազմում, պարապմունքի տևողության որոշում
13. ըստ մանկավարժի հեղինակային մտածողությամբ իրականացված սցենարի պարապմունքի պրոցեսի ընթացք
14. ըստ չափորոշչի եռամսկարդակ պահանջների, գնահատման համակարգի ներառում

Ինտեգրված պարապմունքը, դա գործունեություն է, որն ուղղված է որոշակի թեմայի ամբողջական էության բացահայտմանը տարբեր տեսակի գործունեության միջոցով, որոնք համակցված են գործունեության լայն տեղեկատվական դաշտում՝ փոխադարձ ներթափանցման և հարստացման միջոցով: Ինտեգրված պարապմունքի կառուցվածքը պահանջում է հատուկ հստակություն, մտածված և տրամաբանական փոխկապակցվածություն տարբեր առարկաներից նյութերի թեմայի ուսումնասիրության բոլոր փուլերում: Դա ձեռք է բերվում ծրագրային նյութի

կոմպակտ, կենտրոնացված օգտագործման, խմբում երեխաներին կազմակերպելու ժամանակակից մեթոդների կիրառման և ինտերակտիվ աշխատանքի պայմաններում: Ինտեգրված պարապմունքի նախապատրաստման փուլում, գիտելիքների համակարգային բնույթին համապատասխանելու համար, մանկավարժները օգտագործում են մտավոր քարտեզների մեթոդը կամ մտավոր գործողությունների քարտեզները:

Պարզ և հստակ ձևակերպելով պարապմունքի նպատակը՝ ուսուցիչը հավաքում է մեկ պարապմունքում միավորվող ուսումնական նյութը, այսինքն՝ որոշում է ինտեգրման բաղադրիչները: Դա արվում է համագործակցող դաստիարակի հետ: Այս փուլում հավաքվում են միայն ուսումնական թեմաներն ու դրանց առանձին մասերը, որոնք պետք է կազմեն ինտեգրման բովանդակային հիմքը: Այստեղ դրսևորվում է նաև ինտեգրմանը մասնակցող դաստիարակի փոխհամաձայնությունը: Ապա երկու դաստիարակներ սկսում են վերլուծել ընտրված նյութը և բաժանում են այն երկու մասի՝ հիմնական և օժանդակ:

Հիմնական նյութը դառնում է պարապմունքի՝ համակարգ ձևավորող բաղադրիչը: Այսպիսով, ելնելով ինտեգրված պարապմունքի տեսակից և ինտեգրվող առարկաների պարապմունքի տիպերից, ուսուցիչները համատեղ կազմում են իրենց պարապմունքի նպատակները՝ զուգակցելով ընդհանուրը մասնավորի հետ, շաղկապելով ինտեգրվող նյութի բովանդակությունները տարբեր առարկաների տեսանկյուններից: Կախված նրանից, թե ինչ ձևով է տեղի ունենում ինտեգրումը (հավասարապես ինտեգրվում են երկու կամ ավելի առարկաներ, ինտեգրման ժամանակ գերակայությունը տրվում է մեկ առարկայի, իսկ մյուսը դառնում է օժանդակ, օգնող առարկա և այլն), կազմվում է պարապմունքի պլանը, որոշվում է պարապմունքի տևողությունը: Պլանի մեջ հստակորեն ներկայացվում է քայլերի հաջորդականությունը, պարզորոշ կերպով ընդգծվում են առաջատար և օժանդակ առարկաները: Ինտեգրված պարապմունքն արդյունավետ անցկացնելու նախապայմաններից ամենակարևորը պարապմունքի ճիշտ պլանավորումն է, որի մեջ, ըստ չափորոշի եռամակարդակ պահանջների, պետք է ներառվի նաև գնահատման համակարգը:

Այսպիսով, ինտեգրված մոտեցումը համապատասխանում է նախադպրոցական դիդակտիկայի հիմնական պահանջներից մեկին. կրթությունը պետք է լինի փոքր ծավալով, բայց տարողունակ:

Հետևաբար, ինտեգրված և համապարփակ պարապմունքում ապահովվում է երեխաների գործունեության տարբեր տեսակների առկայությունը՝ համատեղելով տարբեր ոլորտների գիտելիքները:

Չետագոտությունից հետո ես ինձ համար կարևորեցի այն, որ շատ հետաքրքիր և բազմաբովանդակ աշխատանք է տարրական մաթեմատիկական գիտելիքների զարգացումը, քանի որ մաթեմատիկան որպես գիտություն բազմաբնույթ ու հետաքրքիր է : Դրան զուգահեռ շատ կարևոր է նաև աշխատակիցների համագործակցությունը, քանի որ թիմային աշխատանքը ևս արդյունքի հասնելու լավագույն միջոցն է: Կատարելով իմ ուսումնասիրությունները և հաշվի առնելով այն հետաքրքիր պահերը, որ ես ունեցա հանգեցի նրան, որ տարրական մաթեմատիկական գիտելիքների զարգացումը ոչ միայն առարկաների, դրանց հարաբերակցության հատկանիշների, թվերի, երկրաչափական պատկերների և դրանց հետ կապված գործողությունների ուսումնասիրությունն է, այլև՝ միջոց երեխաների աշխարհընկալման համար:

Օգտագործված գրականության ցանկ

ԿԳՄՄՆ կողմից հաստատված Նախադպրոցական կրթական հիմնական ծրագիր(3- 4 տարեկան կրտսեր 2-րդ խումբ)

<<Չվարճալի Մաթեմատիկա>> Սոնա Սարգսյան, Արմեն Գրիգորյան

<<Մաթեմատիկայի պարապմունքները մանկապարտեզում, կրտսեր 2-րդ և միջին խմբեր, ուսումնական ձեռնարկ>> Հռիփսիմե Հարությունյան

Գիտամեթոդական հանդես <<Նախաշավիղ>>